

ՆՈՐ ՏԱՂԵՐ (1906-1907)

1. ՎԱՅՐԿԵԱՆ

Թոյլ շրշիւն մը, յետոյ բոյր մը մշկենի.
Եւ յամրագին գիրքը ձեռքես կ'իյնայ վար.
Երազներու պերճուհին է որ կ'անցնի,
Ու կը փոթի ծովակն հոգւոյս մեղմավար:

Ու կը փոթի ծովակն հոգւոյս մեղմավար,
Եւ ալիք մը թելը բացած կը վազէ
Գրկել ափունքն իղծիս ոսկի աւազէ:

Ո՛վ քաղցրութիւնը նայուածքին իր ծաղիկ.
Ո՛վ պերճութիւնը գընացքին իր հըպարտ.
Ճամբուն վըրայ՝ իր քայլերուն հետքը վարդ՝
Ուր հեշտօրէն կը յածի դեռ իմ մենիկ

Սիրտըս՝ բո՛ց մը՝ մըթնշաղի՛ն մէջ անհետ...

2. ԶՈՒՐԵՆ ԴԱՐՁԻՆ

Երբ բըլուրն ի վար
Աղբիւրէն դարձին,
Իր վարսքի խուրձին
Մէջը սողոսկի
Նուրբ մատիկն ոսկի
Արեւի լոյսին.
Հիր սափորն ուսին
Երբ բըլուրն ի վար
Աղբիւրէն դարձին,
Մեղմով ծածանի
Լաջակն հողմավար՝
Թելով թռչունի.
Ու ծիածանի
Թոյրով պսպըղայ
Աչքն իր գեղանի.
Եւ երբոր ցնծայ
Հնչիւնը՝ ծնծղայ